Ալեքսանդր Ծատուրյան

Սիրելի՛ ընկեր . . .

Սիրելի՛ ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ մատաղ կյանքիս եռուն հասակում
Այնքա՜ն տխուր է հնչում իմ քընար:
Վիշտ ու թախիծ ես կարդում իմ երգում:

Ծնված հեգ երգիչ մի դժբախտ ազգի,
Միշտ մըռայլ տեսա երկինքը գլխիս.
Ես շատ վա՛ղ ուսա տանջանքը կյանքի,
Վա՛ղ մտերմացավ վըշտի հետ հոգիս:

Անմեղ հասակից օրորոցիս մոտ,
Ուր պետք է սիրտս մեղմ օրոր շոյեր,
Ուր պետք է ժպտար կյանքի առավոտ,
Ես տեսա միայն սև ու մութ օրեր...

Տեսա կատաղի չարության մատնված
Անզեն թշվառներ ժանտ դահճի առաջ
Լսեցի անտուն, դոնե-դուռ ընկած
Հարազատ ազգիս աղերսն ու հառաչ...

Այո՜, ընկե՛ր իմ, դու մի՛ զարմանար,
Որ գարուն չունի էլ մատաղ հոգիս.
Արյուն-արցունքով ներկված իմ քընար

Ազգիս վշտին է արձագանք տալիս...